

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ճ-2

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՆՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան

27 01 2015թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Վահրամ Հակոբյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Հոծ միջավայրի մեխանիկա» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 153458100 (հարյուր հիսուներեք միլիոն չորս հարյուր հիսունույթ հազար հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարիխության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա

գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 153458100 (հարյուր հիսուններեք միլիոն չորս հարյուր հիսունութ հազար հարյուր) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 153458100 (հարյուր հիսուններեք միլիոն չորս հարյուր հիսունութ հազար հարյուր) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարվում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի աժի ազդեցությունը (ՖՈՒՄ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

- ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,
- բ. Առաջադրանքը (հավելված 1),
- գ. Օրացուցային պլանը (հավելված 2),
- դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),
- ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ. Սարտիրոսյան


ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ ՊՈԱԿ

0019 Երևան, Բաղրամյան 24/2

Զարգացման Հայկական Բանկ,

Հ/հ 1810052009003311

Տնօրեն՝ Վ.Հակոբյան



27 01
N 2-2 պայմանագրի
հավելված 1
2015թ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հոծ միջավայրի մեխանիկա» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե
2. Աշխատանքի նպատակը

Հայաստանում պատմականորեն զարգացած հոծ միջավայրի մեխանիկայի ավանդական ուղղությունների՝ առաձգական և առաձգամածուցիկ մարմինների մեխանիկայի, բարակապատ տարրերի, դեֆորմացվող համակարգերի և կապակցված դաշտերի փոխազդեցության մեխանիկայի, ինչպես նաև փորձարարական մեխանիկայի հետազոտման ու արդիականացումը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում)

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները պետք է բավարարեն միջազգային բարձր չափանիշներին՝ լինեն նոր, արդիական, պարունակեն գիտական նորույթ: Մեխանիկայի տեսանկյունից լինեն խորը վերլուծություններով և եզրակացություններով հարուստ:

4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)

2015 թ. նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները

Նախատեսվում է ուսումնասիրել կանոնական տիրույթներով (հարթություն, կիսահարթություն, տարածություն, կիսատարածություն, շերտ, սեպ) մոդելավորվող առաձգական կամ առաձգամածուցիկ մարմիններում ճաքերի տարածման օրինաչափությունները և դրանց հիման վրա մշակել մարմինները ստրինգերներով կամ բարակապատ ներդրակներով ուժեղացնելու այնպիսի եղանակներ, որոնք կկանխարգելեն ճաքերի տարածումը: Նպատակ է դրվում ճաքեր պարունակող դեֆորմացվող մարմինների բարակապատ տարրերով պատշաճ եղանակներով ուժեղացնելու ու դրանց երկրաչափական և ֆիզիկական պարամետրերի հարմար ընտրությամբ հասնել ճաքերի ծայրակետերում քայքայող լարումների ուժգնության գործակիցների կամ քայքայման համար ազատված անհրաժեշտ էներգիայի զգալի նվազեցման, որը կապահովի ճաքի տարածման կանխարգելումը:

Շետազոտվելուն են մաշման կամ խորդուբորդության գործոնների հաշվառումով ոչ գծային կոնտակտային խնդիրներ, որոնք նկարագրվում են Համերշտեյնի տիպի ոչ գծային ինտեգրալ հավասարումներով: Անցկացվելու է նաև աստիճանային օրենքով ոչ գծային կայունացած սողքի տեսության դրվածքով կոնտակտային խնդիրների ուսումնասիրություն: Ճաքեր պարունակող համասեռ, կտորակտոր համասեռ կամ էլ անընդհատ անհամասեռ մարմինների համար կմշակվեն որոշիչ հավասարումների արդյունավետ լուծման վերլուծական և թվային վերլուծական եղանակներ:

Ուսումնասիրվելու են գազահեղուկ միջավայրերում և էլեկտրամագնիսական դաշտերում գերձայնային արագությամբ շրջոսվող, տարբեր ֆիզիկամեխանիկական հատկություններով կյուբերից պատրաստված ձողերի, սալերի և թաղանթների կայունությունը խնդիրներ:

Հետազոտվելու են ֆիզիկական կամ կառուցվածքային անհամասեռություններ պարունակող դեֆորմացվող առաձգական միջավայրում կապակցված դաշտերի հաշվառումով խնդիրների նոր դրվածքներ, դրանց դեպքում ուսումնասիրվելու է առաձգական միջավայրում լարվածա-դեֆորմացիոն կապակցված վիճակը:

Կատարվելու են կապակցված ֆիզիկամեխանիկական հատկություններով նյութերից պատրաստված ալիքատարներում, առաձգական ալիքների տարածման առանհատկություններին վերաբերող ուսումնասիրություններ: Քննարկվելու են մարմնի նյութի կամ կառուցվածքային անհամասեռությունից, արտաքին միջավայրի և նախնական վիճակի պայմաններից կախված, ալիքային դաշտի նոր հնարավոր վարքերը: Ոչ գծային էլեկտրաառաձգականության ալիքների տարածման խնդիրներ, երկրաչափական և ֆիզիկական ոչգծայնությունների հաշվառումով:

Ստդելավորվելու են առաձգական մարմնի նյութի և կառուցվածքային անհամասեռության, նախնական ֆիզիկական դաշտերի, արտաքին միջավայրի և հնարավոր խառը եզրային պայմանների հաշվառումով, փոխկապակցված էլեկտրամագնիսամեխանիկական գործընթացները:

Ուսումնասիրվելու են առաձգական բարակապատ մարմինների և գազահեղուկ միջավայրի փոխազդեցության դինամիկայի խնդիրները:

Անցկացվելու է ուսումնասիրություն բազմաշերտ անիզոտրոպ սալերի և զլանային թաղանթի կայունության վերաբերյալ:

Քննարկվելու են խնդիրներ առաձգամածուցիկ լցնով զլանային թաղանթի կայունության խառը եզրային պայմանների դեպքում: Դիտարկվելու են խնդիրներ զլանային օրթոտրոպ կլոր սալի ազատ տատանումների և կայունության ընդլայնական սահքերի և պտտման իներցիայի ազդեցությունների հաշվառումով:

Դիտարկվելու են փոփոխական հաստության օրթոտրոպ սալ-շերտի կամ հեծանի ազատ տատանումների և կայունության ուսումնասիրություն տարբեր եզրային պայմանների դեպքում:

Փոփոխական հաստության սալ-շերտերի և զլանային կլոր սալի ծոման խնդիրների լուծում առաձգական ամրակցման հենարանի առկայության դեպքում:

Ասիմպտոտիկ մեթոդով էլեկտրաառաձգականության դինամիկ խնդիրների լուծում՝ ըստ հաստության և ըստ երկարության բևեռացված բարակապատ շերտավոր համակարգերի համար:

Լուծվելու են մագնիսաառաձգականության դինամիկ խնդիրների բարակապատ համակարգերի համար:


Իրականացվելու են հետազոտություններ գրունտների, այդ թվում և կավային, սահքի դիմադրության, էներգիայի ցրման բեռների կրկնվող-ստատիկ և դինամիկական ազդեցության պայմաններում՝ հաշվի առնելով գրունտի ֆիզիկական վիճակը (կոնսիստենցիա):

Անցկացվելու են հետազոտություններ ակուստիկ ալիքների, մեխանիկական տատանումների և էլեկտրամագնիսական դաշտերի կենսաբանական միջավայրերի վրա ունեցած ազդեցությունների ուղղությամբ:

Հետազոտվելու են բեռների ստատիկ և բաբախող սակավացիկլային ազդեցության պայմաններում ամրանավորված կոմպոզիտների մեխանիկական վարքը, այդ թվում և հոգնածային ամրության անիզոտրոպիայի ջերմային դաշտի, պատրաստման տեխնոլոգիական առանձնահատկությունների և հասակի հաշվառմամբ:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը

Ընդացիվ են հրատարակվել հաշվետվությունների ներկայացում, գիտական հոդվածների, թեզիսների և մեկնագրությունների տպագրում, գեկուցումներ սեմինարներում, միջազգային և հանրապետական գիտաժողովներում:



Տնօրեն _____ (Վ. Հակոբյան)

Հավելված 2
 2015թ.
 N 8-2 պայմանագրի

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Հոծ միջավայրի մեխանիկա» ծրագրի

Իրականացվելիք միջոցառումներ

NN	անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառնությունների նկարագրերը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամ կետը	պահանջվող գումարը (հազ. դրամ)
1.	Առաձգական և առաձգանաձուցիկ մարմինների մեխանիկա	Նախատեսվում է ուսումնասիրել կանոնական տիրույթներով (հարթություն, կլասիկադրություն, տարածություն, կիսատարածություն, շերտ, սեպ) մոդելավորվող առաձգական կամ առաձգանաձուցիկ մարմիններում ճաքերի տարածման օրինաչափությունները և դրանց հիման վրա մշակել մարմինները ստրիկեներով կամ բարակազատ ներդրակներով ուժեղացնելու այնպիսի եղանակներ, որոնք կկանխարգելեն ճաքերի տարածումը: Ընդհանուր առմամբ դեֆորմացիոն մարմինները բարակազատ տարրերով պատշաճ եղանակներով ուժեղացնելու ու դրանց երկրաչափական և ֆիզիկական պարամետրերի հարմար ընտրությամբ կարելի է հասնել ճաքերի ծայրամեծությունը բացարձակ լարումներ ուժգնության գործափնցների կամ բարձրագույն համար ազատված անհրաժեշտ էներգիայի զգալի նվազեցման: Այդ բնութագրիչների նվազեցումն էլ հենց կապահովի ճաքի տարածման կանխարգելումը:	Խնդիրների դրվածքների հստակեցում, որոշիչ հավասարումների ստացում, դրանց հետազոտումը անալիտիկ կամ թվային մեթոդներով: Ստացված արդյունքների համակարգում:	Կշարունակվեն մշակվել առաջարկություններ բարդարյուղ մարմինների միացությունների մեքենամասերի և հանգույցների հանգույցների ամրությունները ապահովող չափանիշների պայմանների և տեխնիկական պահանջների, միացությունների ծայրամեծությունը թերաբարձանային տիրույթների որոշման, երկրաչափական և մեխանիկական պարամետրերի օպտիմալ ընտրության վերաբերյալ:	31.12.2015թ.	38364,525

	<p>օրենքով ոչ գծային կայունացած ստորին սեռականության դրվածքով կոնտրակտային խնայիրների ուսումնասիրություն: Ընթացիկ պատմական մարիմոնեթը կարող են լինել համաձայն, կոտորակային համաձայն կամ էլ անընդհատ անհամաձայն: Կենսաբանական խնայիրների որոշիչ հավասարումների արդյունավետ լուծումն փերլոմոմիկան և թվային փերլոմոմիկան եղանակները:</p>	<p>խնայիրների դրվածքների հստակեցում, որոշիչ հավասարումների ստացում, դրանց հետազոտումը անալիտիկ կամ թվային մեթոդներով: Ստացված արդյունքների համակարգում:</p>	<p>Բարակապատ համակարգերի և ամբարտայան կայունության վրա ազդող առավել լայն սպեկտրի գործոնների ազդեցության դասակարգում: Անիմացիոն մեթոդի կիրառման էֆեկտիվությունը հաստատում բարակ մարմինների և ջերմային ու էլեկտրամագնիսական դաշտերի փոխազդեցությունների ուսումնասիրման արդյունքում:</p> <p>Դրուհամե-Նեյմանի սոլելի կիրառելիության ստեղծման ճշգրտում սպեկտրի և թաղանթների համար: Անիմացիոն մեթոդի կիրառման էֆեկտիվությունը հաստատում բարակ մարմինների և էլեկտրամագնիսական դաշտերի փոխազդեցությունների ուսումնասիրման արդյունքում:</p>		<p>35295,363</p>
<p>2.</p> <p>Բարակապատ համակարգերի մեխանիկա</p>	<p>Բազմաշերտ անփոփոխ պլեյրի և գլանային թաղանթի կայունության ուսումնասիրություն: Առաձգականության ցանցի գլանային թաղանթի կայունության ուսումնասիրություն խառը եզրային պայմանների դեպքում: Գլանային օբյեկտի կարգի ազդանշանային և կայունության ուսումնասիրությունը ընդլայնական սահմանների և գլանային թաղանթի ազդեցությունների հաշվառումով: Փոփոխական հաստության օբյեկտի պլեյրի կամ հեծանի ազդանշանային և կայունության ուսումնասիրությունը տարբեր եզրային պայմանների դեպքում:</p> <p>Փոփոխական հաստության սալ-շերտերի և գլանային կլոր սալի ծունկի խնայիրների լուծումը առաձգական ստեղծման հետևանքի առկայության դեպքում:</p> <p>Անիմացիոն մեթոդով էլեկտրամագնիսականության դինամիկ խնայիրների լուծումը՝ ըստ հաստության և ըստ երկարության բնութագրված բարակապատ շերտաձև համակարգերի համար:</p> <p>Սաղմնաբանականության դինամիկ խնայիրների լուծումը բարակապատ համակարգերի համար:</p>	<p>խնայիրների դրվածքների հստակեցում, որոշիչ հավասարումների ստացում, դրանց հետազոտումը անալիտիկ կամ թվային մեթոդներով: Ստացված արդյունքների համակարգում:</p>	<p>Բարակապատ համակարգերի և ամբարտայան կայունության վրա ազդող առավել լայն սպեկտրի գործոնների ազդեցության դասակարգում: Անիմացիոն մեթոդի կիրառման էֆեկտիվությունը հաստատում բարակ մարմինների և ջերմային ու էլեկտրամագնիսական դաշտերի փոխազդեցությունների ուսումնասիրման արդյունքում:</p> <p>Դրուհամե-Նեյմանի սոլելի կիրառելիության ստեղծման ճշգրտում սպեկտրի և թաղանթների համար: Անիմացիոն մեթոդի կիրառման էֆեկտիվությունը հաստատում բարակ մարմինների և էլեկտրամագնիսական դաշտերի փոխազդեցությունների ուսումնասիրման արդյունքում:</p>		

3.	Ղեկորանցիկը համակարգվելու և կապակցված դաշտեր	Գազաներուկ միջավայրերում և էկոտրամագնիսական դաշտերում գերձայնային արագությամբ շրջառվող, տարբեր ֆիզիկամեխանիկական հատկություններով նյութերից պատրաստված ձողերի, սալերի և թաղանթների կայունությունը ուսումնասիրման խնդիրները: Ֆիզիկական կամ կառուցվածքային անհամաեռություններ պարունակող դեֆորմացիոլ առաձգական միջավայրում կապակցված դաշտերի հաշվառումով խնդիրների նոր դրվածքների հետազոտություն, դրանց դեպքում առաձգական միջավայրում լարվածա-դեֆորմացիոն կապակցված վիճակի ուսումնասիրություն: Կապակցված ֆիզիկամեխանիկական հատկություններով նյութերից պատրաստված ավիբրաստայիններում, առաձգական ավիբրների տարածման առաձգահատիկությունների ուսումնասիրություն: Մարմնի նյութի կամ կառուցվածքային անհամաեռությունից, արտաքին միջավայրի և նախնական վիճակի պայմաններից կախված, ավիբրային դաշտի նոր հնարավոր վարքերի բացահայտում և ուսումնասիրություն:	Ընչ գծային էկոտրամագնիսականության ավիբրների տարածման խնդիրներ, երկրաչափական և ֆիզիկական ոչգծայնությունների հաշվառում: Առաձգական մարմնի նյութի և կառուցվածքային անհամաեռության, նախնական ֆիզիկական դաշտերի, արտաքին միջավայրի և հնարավոր խառը եզրային պայմանների հաշվառումով, փոխկապակցված էկոտրամագնիսամեխանիկական գործընթացների մոդելավորում: Առաձգական բարոպապատ մարմինների և գազաներուկ միջավայրի փոխազդեցության դինամիկայի ուսումնասիրության խնդիրներ:	Խնդիրների որվածքների հատակեցում, որոշիչ հավասարումների ստացում, դրանց հետազոտումը անալիտիկ կամ թվային մեթոդներով: Ստացված արդյունքների համակարգում:	Ոչ գծային ավիբրային և դինամիկայի գազային մեթոդներով կոորդիկոլորեն ինչպես մեխանիկայի, այնպես էլ բիոմեխանիկայի, տնտեսագիտության, կենսաբանության, աստղաֆիզիկայի, սելանոլոգիայի և այլ բնագավառներում ընթացող ստոխաստիկ պրոցեսները: Կրացահատյալի գերձայնային հաճախականությունը տատանումների անսահման ազդեցությունը նյութերի և նրանց մեխանիկական հատկությունների փոփոխման օրինակաբար ան վրա:	56779,497
4.	Փորձարարական հետազոտություններ	Գրունտների այդ թվում և կավային, սահքի դինամիկայի, էներգիայի ցրման հետազոտությունների իրականացում բեռների կրկնվող-ստատիկ և դինամիկական ազդեցության պայմաններում հաշվի առնելով գրունտի ֆիզիկական վիճակը (գրունտստեղծում): Ակուստիկ ավիբրների, մեխանիկական տատանումների և էկոտրամագնիսական դաշտերի կենսաբանական միջավայրերի վրա ունեցած ազդեցությունների հետազոտություններ: Բեռների ստատիկ և բարձրադարձ սակավաչիլլային	Ստացված տեղական արդյունքների ընդհանրացում: Փորձերի նախապատրաստում, փորձերի իրականացում, ստացված տվյալների	Կարգավի սահմանափակված կոորդիկոլ նյութերի մեխանիկական վարքը ստատիկ և դինամիկ բեռներ ազդեցությունների պայմաններում: Կորոշվեն հոծ միջավայրում ընթացող դինամիկական երևույթների բարդորիչների վրա	23018,715	

27 01 Հավելված 3
2015թ.
N Ե-2 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

«Հոծ միջավայրի մեխանիկա» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ ՊՈԱԿ տնօրեն Վահրամ Հակոբյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2015թ. N Ե-2 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 153458100 (հարյուր հիսուններեք միլիոն չորս հարյուր հիսունույթ հազար հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան



ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ ՊՈԱԿ

0019 Երևան, Բաղրամյան 24/2

Զարգացման Հայկական Բանկ,

Հ/հ 1810052009003311

Տնօրեն՝ Վ. Հակոբյան




Հավելված 4
 «27» 01 2015թ.
 N 8-2 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

NN Ը/Կ	Ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	135200,0	27040,0	33800,0	33800,0	40560,0
2	տնտեսական և այլ ծախսեր	18258,1	3651,62	4564,525	4564,525	5477,43
3	Ընդամենը	153458,1	30691,62	38364,525	38364,525	46037,43


153458100 (հարյուր հիսուներեք միլիոն չորս հարյուր հիսունութ հազար հարյուր)

Տնօրեն՝


 (ստորագրություն)

(Վ. Հակոբյան)

Գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

(Ս. Մարտիրոսյան)

